«ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՊՈՐՏԻ, ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀՈԱԿ-Ի ՀԱՄԱՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ՎՋՄՋՔ-ՀՄԱ-ԱՊՁԲ-07/11/19.1»

ք. Ջերմուկ «07» նոյեմբերի 2019 թ.

Ջերմուկի համայնքապետարանը՝ ի դեմս համայնքի ղեկավար Վարդան Հովհաննիսյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և Մուշեղ Աղաջանյան Ա/Ձ-ն, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **980700** (ինը հարյուր ութսուն հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:[16] Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

---

[16] *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:[18]

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

---

[18] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնվելիք ապրանքը չի հանդիսանում հիմնական միջոց:Իսկ եթե գնվելիք ապրանքը հանդիսանում է հիմնական միջոց, ապա երաշխիքային ժամկետը չպետք է պակաս լինի 365 օրացուցային օրից*

Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այն պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով սահմանված ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան

պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	**ՎԱՃԱՌՈՂ**
Ջերմուկի համայնքապետարան	Ա/Ձ Մուշեղ Աղաջանյան
ք. Ջերմուկ, Մյասնիկյան 8	ք. Ջերմուկ, Ազատամարտիկների 15
Կենտրոնական գանձապետարան	«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ Ջերմուկի մ/ճ
Հ/Հ 900362066012	Հ/Հ՝ 16049007485500
ՀՎՀՀ 08913735	ՀՎՀՀ՝ 76838468
համայնքի ղեկավար՝ Վ. Հովհաննիսյան	տնօրեն՝ Մ. Աղաջանյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
«07 » նոյեմբերի 2019թ. կնքված
N «ԿՋՄՋՔ-ՀՄԱ-ԱՊՁԲ-07/11/19.1» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի								մատակարարման		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը**	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	ժամկետը ***
1	44621160	Կենտրոնացված ջեռուցման կաթսաներ	Կենտրոնացված ջեռուցման կաթսա/30Կվտ/	հատ	405500	405500	1	Ք.Ջերմուկ	1	07.11.19-27.11.19թ.թ
2	44621160 /2	Կենտրոնացված ջեռուցման կաթսաներ	Կենտրոնացված ջեռուցման կաթսա/30Կվտ/	հատ	276600	276600	1	Ք.Ջերմուկ	1	07.11.19-27.11.19թ.թ
3	44621110	Կենտրոնացված ջեռուցման ռադիատորներ	Կենտրոնացված ջեռուցման ռադիատորներ	հատ	2700	162000	60	Ք.Ջերմուկ	60	07.11.19-27.11.19թ.թ
4	44112730 /1	Կտրող սկավառակ	Կտրող սկավառակ	հատ	1000	2000	2	Ք.Ջերմուկ	2	07.11.19-27.11.19թ.թ
5	44621130	Կենտրոնացված ջեռուցման ռադիատորների մասեր	Կենտրոնացված ջեռուցման ռադիատորների մասեր	հատ	1400	14000	10	Ք.Ջերմուկ	10	07.11.19-27.11.19թ.թ
6	44621130 /2	Կենտրոնացված ջեռուցման ռադիատորների մասեր	Ռադիատորի կախիչ	հատ	400	3600	9	Ք.Ջերմուկ	9	07.11.19-27.11.19թ.թ
7	44621130 /3	Կենտրոնացված ջեռուցման ռադիատորների մասեր	Ռադիատորի փական	հատ	1400	33600	24	Ք.Ջերմուկ	24	07.11.19-27.11.19թ.թ
8	31221241 /1	Դյուբել-պտուտակ	Դյուբել-պտուտակ	հատ	10	2000	200	Ք.Ջերմուկ	200	07.11.19-27.11.19թ.թ
9	44511340	Գայլիկոնի սայրեր	Գայլիկոնի սայր	հատ	1000	1000	1	Ք.Ջերմուկ	1	07.11.19-27.11.19թ.թ
10	24951130 /1	Սիլիկոնե քսուկներ	Սիլիկոնե քսուկներ	հատ	1000	1000	1	Ք.Ջերմուկ	1	07.11.19-27.11.19թ.թ

11	44621170 /2	Կենտրոնացված ջեռուցման ռադիատորների մասեր	Զտիչ/ ½ /	հատ	600	1200	2	Ք.Ջերմուկ	2	07.11.19-27.11.19թ.թ
12	44621170	Կենտրոնացված ջեռուցման ռադիատորների մասեր	Զտիչ/ ¾ /	հատ	800	1600	2	Ք.Ջերմուկ	2	07.11.19-27.11.19թ.թ
13	44163121	Ջեռուցման խողովակներ	Ջեռուցման խողովակ/ ¾ /	մետր	600	60000	100	Ք.Ջերմուկ	100	07.11.19-27.11.19թ.թ
14	44163121 /2	Ջեռուցման խողովակներ	Ջեռուցման խողովակ/ ½ /	մետր	450	9000	20	Ք.Ջերմուկ	20	07.11.19-27.11.19թ.թ
15	44163420	Խողովակի արմունկ	Խողովակի արմունկ/ ¾ /	հատ	60	1200	20	Ք.Ջերմուկ	20	07.11.19-27.11.19թ.թ
16	44163420 /2	Խողովակի արմունկ	Խողովակի արմունկ/ամերիկանկա/ ¾ /	հատ	1000	4000	4	Ք.Ջերմուկ	4	07.11.19-27.11.19թ.թ
17	44163420 /3	Խողովակի արմունկ	Խողովակի արմունկ/ամերիկանկա/ ½	հատ	600	2400	4	Ք.Ջերմուկ	4	07.11.19-27.11.19թ.թ

**Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա նոյեմբերի 27-ը:*

ԳՆՈՐԴ

Ջերմուկի համայնքապետարան
ք. Ջերմուկ, Մյասնիկյան 8
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900362066012
ՀՎՀՀ 08913735
համայնքի ղեկավար՝ Վ. Հովհաննիսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

Ա/Ձ Մուշեղ Աղաջանյան
ք. Ջերմուկ, Ազատամարտիկների 15
«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ Ջերմուկի մ/ճ
Հ/Հ՝ 16049007485500
ՀՎՀՀ՝ 76838468
տնօրեն՝ Մ. Աղաջանյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«07 » նոյեմբերի 2019թ. կնքված
N «ՎՋՄՋՔ-ՀՄԱ-ԱՊՁԲ-07/11/19.1»ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

անվանումը	Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
Տնտեսական ապրանքներ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	980700	... %	980700

ԳՆՈՐԴ
Ջերմուկի համայնքապետարան
ք. Ջերմուկ, Մյասնիկյան 8
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900362066012
ՀՎՀՀ 08913735
համայնքի ղեկավար՝ Վ. Հովհաննիսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
Ա/Ձ Մուշեղ Աղաջանյան
ք. Ջերմուկ, Ազատամարտիկների 15
«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ Ջերմուկի մ/ճ
Հ/Հ՝ 16049007485500
ՀՎՀՀ՝ 76838468
տնօրեն՝ Մ. Աղաջանյան

/ստորագրություն/
Կ.Տ

	ների մասեր							
7	Կենտրոնացված ջեռուցման ռադիատորների մասեր	Ռադիատորի փական	24	24	07.11.19-27.11.19թ.թ.	07.11.19-27.11.19թ.թ.	33.6	Ըստ պայմանագրի
8	Դյուբել-պտուտակ	Դյուբել-պտուտակ	200	200	07.11.19-27.11.19թ.թ.	07.11.19-27.11.19թ.թ.	2	Ըստ պայմանագրի
9	Գայլիկոնի սայրեր	Գայլիկոնի սայր	1	1	07.11.19-27.11.19թ.թ.	07.11.19-27.11.19թ.թ.	1	Ըստ պայմանագրի
10	Սիլիկոնե քսուկներ	Սիլիկոնե քսուկներ	1	1	07.11.19-27.11.19թ.թ.	07.11.19-27.11.19թ.թ.	1	Ըստ պայմանագրի
11	Կենտրոնացված ջեռուցման ռադիատորների մասեր	Զտիչ/ ½ /	2	2	07.11.19-27.11.19թ.թ.	07.11.19-27.11.19թ.թ.	1.2	Ըստ պայմանագրի
12	Կենտրոնացված ջեռուցման ռադիատորների մասեր	Զտիչ/ ¾ /	2	2	07.11.19-27.11.19թ.թ.	07.11.19-27.11.19թ.թ.	1.6	Ըստ պայմանագրի
13	Ջեռուցման խողովակներ	Ջեռուցման խողովակ/ ¾ /	100	100	07.11.19-27.11.19թ.թ.	07.11.19-27.11.19թ.թ.	60	Ըստ պայմանագրի
14	Ջեռուցման խողովակներ	Ջեռուցման խողովակ/ ½ /	20	20	07.11.19-27.11.19թ.թ.	07.11.19-27.11.19թ.թ.	9	Ըստ պայմանագրի
15	Խողովակի արմունկ	Խողովակի արմունկ/ ¾ /	20	20	07.11.19-27.11.19թ.թ.	07.11.19-27.11.19թ.թ.	1.2	Ըստ պայմանագրի
16	Խողովակի արմունկ	Խողովակի արմունկ/ամերիկանկա/ ¾ /	4	4	07.11.19-27.11.19թ.թ.	07.11.19-27.11.19թ.թ.	4	Ըստ պայմանագրի
17	Խողովակի արմունկ	Խողովակի արմունկ/ամերիկանկա/ ½	4	4	07.11.19-27.11.19թ.թ.	07.11.19-27.11.19թ.թ.	2.4	Ըստ պայմանագրի

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

ստորագրություն

Ս. Աղաջանյան

ազգանուն, անուն

Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

ստորագրություն

Կ. Հովհաննիսյան

ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված N 3
«07 » նոյեմբերի 2019թ. կնքված
N «ՎՋՄՋՔ-ՀՄԱ-ԱՊՁԲ-07/11/19.1» *ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ
Ա/Ձ Մուշեղ Աղաջանյան
ք. Ջերմուկ, Ազատամարտիկների 1!
«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ Ջերմուկ Ս/Ճ
Հ/Հ՝ 16049007485500
ՀՎՀՀ՝ 76838468

Պատվիրատու
Ջերմուկի համայնքապետարան
ք. Ջերմուկ, Մյասնիկյան 8
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900362066012
ՀՎՀՀ 08913735

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 01
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » *20* թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ «ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՊՈՐՏԻ, ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀՈԱԿ-Ի կարիքների համար տնտեսական ապրանքների գնման պայմանագիր
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «07» «նոյեմբերի» 2019 թ.
Պայմանագրի համարը՝ «ՎՋՄՋՔ-ՀՄԱ-ԱՊՁԲ-07/11/19.1»
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների						Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի՝	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		
1	Կենտրոնացված ջեռուցման կաթսաներ	Կենտրոնացված ջեռուցման կաթսա/30Կվտ/	1	1	07.11.19-27.11.19թ.թ.	07.11.19-27.11.19թ.թ.	405.5	Ըստ պայմանագրի
2	Կենտրոնացված ջեռուցման կաթսաներ	Կենտրոնացված ջեռուցման կաթսա/30Կվտ/	1	1	07.11.19-27.11.19թ.թ.	07.11.19-27.11.19թ.թ.	276.6	Ըստ պայմանագրի
3	Կենտրոնացված ջեռուցման ռադիատորներ	Կենտրոնացված ջեռուցման ռադիատորներ	60	60	07.11.19-27.11.19թ.թ.	07.11.19-27.11.19թ.թ.	162	Ըստ պայմանագրի
4	Կտրող սկավառակ	Կտրող սկավառակ	2	2	07.11.19-27.11.19թ.թ.	07.11.19-27.11.19թ.թ.	2	Ըստ պայմանագրի
5	Կենտրոնացված ջեռուցման ռադիատորների մասեր	Կենտրոնացված ջեռուցման ռադիատորների մասեր	10	10	07.11.19-27.11.19թ.թ.	07.11.19-27.11.19թ.թ.	14	Ըստ պայմանագրի
6	Կենտրոնացված ջեռուցման ռադիատոր	Ռադիատորի կախիչ	9	9	07.11.19-27.11.19թ.թ.	07.11.19-27.11.19թ.թ.	3.6	Ըստ պայմանագրի

Հավելված 3.1
«07 » նոյեմբերի 2019թ. կնքված
N «ՎՋՄՋՔ-ՀՄԱ-ԱՊՁԲ-07/11/19.1» *ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N 01
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ Ջերմուկի համայնքապետարանի (այսուհետ՝ Գնորդ) և Ա/Ձ Մուշեղ Աղաջանյանի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2019թ. նոյեմբերի 07-ին կնքված N «ՎՋՄՋՔ-ՀՄԱ-ԱՊՁԲ-07/11/19.1» պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)
Կենտրոնացված ջեռուցման կաթսաներ	հատ	1
Կենտրոնացված ջեռուցման կաթսաներ	հատ	1
Կենտրոնացված ջեռուցման ռադիատորներ	հատ	60
Կտրող սկավառակ	հատ	2
Կենտրոնացված ջեռուցման ռադիատորների մասեր	հատ	10
Կենտրոնացված ջեռուցման ռադիատորների մասեր	հատ	9
Կենտրոնացված ջեռուցման ռադիատորների մասեր	հատ	24
Դյուբել-պտուտակ	հատ	200
Գայլիկոնի սայրեր	հատ	1
Սիլիկոնե քսուկներ	հատ	1
Կենտրոնացված ջեռուցման ռադիատորների մասեր	հատ	2
Կենտրոնացված ջեռուցման ռադիատորների մասեր	հատ	2
Ջեռուցման խողովակներ	մետր	100
Ջեռուցման խողովակներ	մետր	20
Խողովակի արմունկ	հատ	20
Խողովակի արմունկ	հատ	4
Խողովակի արմունկ	հատ	4

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

Հանձնեց

Մ.Աղաջանյան
ազգանուն, անուն

Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

Վ.Հովհաննիսյան
ազգանուն, անուն

ստորագրություն